21.06. Արտացոլված է

2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի դասվարի աշխատանքային հաշվետվություն

Դասվար՝ Շ. Քալաշյան

2. Դաստիարակչական

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծել եմ բարենպաստ պայմաններ, միջավայր, համապատասխան կահավորում:
- Սովորեցրել եմ փոխհամագործակցություն և փոխօգնություն:
- Աշակերտների մեջ խորացրել եմ սերը ուսման, հայրենիքի, դպրոցի նկատմամբ:Սերմանել եմ աշխատասիրություն,պարտաճանաչություն և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել եմ գնահատել սեփական արարքները, նկատել իրենց և ընկերների թերությունները, ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակել եմ հարգանք մեծերի նկատմամբ, ուշադրություն՝ փոքրերի նկատմամբ:
- Կարևորել եմ անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Ձևավորել եմ բարոյական արժեքներ, որոնք պետք է դառնան աշակերտների հետագա ուսումնառության և վարքի հիմքը: Ծանոթացրել եմ հայ և արտասահմանյան հանճարեղ մարդկանց կյանքին, նրանց գործունեությանը, կատարած սխրանքներին:
- Ձևավորել հայրենասեր, կրթված, ընկերասեր անհատներ: